



ՀԱՅՈՒԹ ՎԵՐԱԿԱՐԱՎԱՐՈՒՄ ՀԱՅՈՒԹ





**ՀԱՆԴԻՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ՝
ԵՂԵՌՈՒ 60-ԱՄՅԱԿԻ ԵՎ ՄԵԾ ՀԱՂԹԱՆԱԿԻ 30-ԱՄՅԱԿԻ
ԱՌԻԹՈՎ.**

Ապրիլի 27-ին, կիրակի. Տօն երևման և Խաչի.

Այսօր Մայր Աթոռում արժանավայել հանդիսությամբ և մեծ շուքով կատարվում են Եղեռնի 60-ամյակին և Մեծ հաղթանակի 30-ամյակին նվիրված տոնակատարությունները:

Առավոտյան ժամը 11-ին Մայր տաճարում, օրվա հանդիսությունների առիթով, և պատարագ է մատուցում տ. Արքեն եպս. Բերքերյանը:

Ժամը 12-ին **Վեհափառ Հայրապետը** եկեղեցական թափորով առաջնորդվում է Մայր տաճար:

Գարնանային պայծառ ու խաղաղ օր է: Մայր տաճարը և մայրավանքի շրջափակը լիբեն են հավատացյալների բազմությամբ:

«Հայր մեր»-ից առաջ քարոզում է **Վեհափառ Հայրապետը՝ «Փա՛ռք քեզ,
Սատուած, փա՛ռք քեզ, յաղագ ամենալայի, Տէր, փա՛ռք քեզ»** բնարանով, ու վեր հանում օրվա տոնի և հանդիսությունների ազգային, հայրենասիրական նշանակությունը:

Հանդիսություն Վեհարանում

Ժամը 18.30-ին **Վեհարանի հանդիսությանց դաჩլիճում, Հայոց Հայրապետի նախագահությամբ, տեղի է ունենում հանդիսություն՝ նվիրված Եղեռնի 60-ամյակին և Մեծ հաղթանակի 30-ամյակին:**

Հանդիսությանը ներկա են ներքին թեմերի թեմակալ առաջնորդները, Գերագույն հոգևոր խորհրդի և միարանության, Մայր Աթոռին առընթեր

ճարտարապետների հանձնաժողովի, «Էջմիածին» ամսագրի խմբագրական կազմի անդամները, հոգևոր ճեմարանի դասախոսական կազմն ու ուսանողությունը, մայրավանքի պաշտոնեությունը, Երևանի հայագիտական հիմնարկների, ոստինական բարձրագույն հաստատությունների, գրականության, արվեստի, մամուլի, ուղիղությունների և այլ հրավիրագլուխություններ՝ շուրջ 300 հոգի:



Ս. Մեսրոպ Մաշտոցի անվան ճեռագրաց Մատենադարան. Երևան

Հանդիսականը ներկա են նաև ՀՍՍՀ Մինիստրների սովետին առընթեր հայ եկեղեցու գործերի խորհրդի նախագահ Սարգսի Գասպարյանն ու տեղակալ Սուրեն Հովհաննիսյանը, ինչպես նաև Էջմիածին քաղաքի պաշտոնական անձնավորություններ:

Հորելյանական սույն հանդիսականությունն սկսվում է ՀՍՍՀ պետական հիմնի նվագով, որը դաշնամուրի վրա կատարում է Մայր տաճարի երգչախմբի դաշնամարտ Լևոն Աքրահամյանը:

Այսուհետև Մայր տաճարի լուսարարապետ տ. Հովսիկ Եպս. Սանթորյանը, հանուն Գերագույն հոգևոր խորհրդի, հանդես է գալիս հանդիսականը նվիրված բացման խոսքով.

Տ. Հովսիկ Եպս. Սանթորյանի բացման խոսքը

«Այս տարի, ապրիլի 24-ին, լրացավ Մեծ եղեղնի 60 տարին:

Համայն հայ հաւատուցյալ և հայրենասեր ժողովուրդը, որ ի Հայաստան և ի ամյուս աշխարհի, համագոյին հանդիսականը, եկեղեցական արարո-

դություններով, արցունքով, աղոթքով ու սգո երթերով նշեց իր բյուրախիր նահատակների հիշատակը, նահատակներ, որոնք ընկան հանուն հավատի ու արդարության, հանուն մայր հայրենիքի գալիք վերածննի և հայ ժողովրդի հավերժ ապրելու տուր կամքի ու գիտակցության:

Մայր Աթոռ ս. Էջմիածինը, Նորին Սուրբ Օծություն Տ. Տ. Վազգեն Ա Սրբազնագույն կաթողիկոսի բարձր նախագահությամբ, Վեհարանի հանդիսությանց դահլիճում, այս երեկո բերում է անա իր հարգանքի սրտագին տուրք՝ Ապրիլյան մեծ եղեննի Յօ-ամյակին և Հայրենական պատերազմում տարված հաղթանակի Յօ-ամյա տարեդարձին:

Հայաստանը հաճախ ունեալու է եղել բարբարոս ցեղերի ու ազգերի կողմից, որոնք նվաճելով հայրենի հողը, հայ ժողովրդի գլխին բերել են անլուր գրկանքներ ու ծով տառապանքներ, սակայն այդ բազում չարչարանքներից ոչ մեկը չի կարող համեմատվել Ապրիլյան եղեննի հետ, եղենն, որը կատարվեց հայության համեյս 1915—16 թվականներին իշխիհատական Թուրքիո ունրագործ ղեկավարների կողմից:

Նրանք փորձեցին ազգովին բնաշնչել մի ժողովրդի, որն իր հանճարով, արդար աշխատանքով, արվեստով ու մշակույթով բարի ու շինարար ծառայություն էր մատուցել նենց իրեն՝ օսմանյան պետությանը, երա վերելքին ու բաղարակրթությանը:

Այո՛, նահատակնեց հայ ժողովուրդը, բայց նա մնաց կենդանի, որով նեսն կարողացավ այդ ուրերգությանց ժամանակ հոգեւկան ոժ գտնել իր մեջ, որի շնորհիվ և՛ գոյատնեց, և՛ հասալ այսօրվա մեր երշանիկ ներկային ու նայում է ավելի վառ հավատով իր պայծառ ապագային:

Սովետական Հայաստան Ապրիլյան եղեննի մեր բյուրավոր նահատակների հայրենասիրական իդաերի ու իդեալների մարմնացումն է: Նրանք ընկան քաշերի մահով՝ մեզ կտակելով հայրենասիրություն, հավատարմություն նայոց պատմության և նվիրում դեպի վերածնված Հայաստանը:


Այսօր մենք հիշատակում ենք նաև Հայրենական մեծ պատերազմում տարած հաղթանակի Յօ-ամյա փառապանծ տարեդարձը: 1945 թ. մայիսի 9-ին, մի գեղածիծաղ առավոտ, հնշեց հաղթանակի շնկորը: Սովետական Միության բոլոր ժողովուրդները և աշխարհի խաղաղական մարդիկ ցնծությամբ ու բերկրանքով ողջունեցին խաղաղության մեծ ավետիսը:

Հայրենական պատերազմում հայ ժողովուրդը նոյնապես պայքարի ելավ մեկ մարդու նման՝ հանուն սովետական մեծ հայրենիքի և հանուն մեր վերածնված Հայաստանի պատապանության, երա երշանիկ ու խաղաղ կյանքի անփանգության: Հազարավոր հայ ուզմիկներ մեկնեցին ուազմանակատ: Վարդանանց ու Սարդարապատի հերոսների նման նրանք կովեցին ատելի թշնամու դեմ մինչև հալթանակի օրը՝ մարտերում ցուց տալով իրենց հոգու բովանդակ արիությունն ու հայթելու անդրվելի կամքը: Շատ-շատերը նրանցից չվերադարձան տուն, չճաշակեցին հալթանակի բերկրանքը, սակայն հայ երախտապարտ ժողովուրդն իր գոհված մարտիկներին չի մոտացել ու չի մոռնան երբեք: Նրանք ապրում են ու պիտի ապրեն հավետ մեր ժողովրդի սրտում:

Հայրենական պատերազմում Մայր Աթոռ ս. Էջմիածինը ևս, երշանկանիշատակ Գևորգ Զ հայրենական կաթողիկոսի գլխավորությամբ, բերեց ընդհանուր հաղթանակին նյութական ու բարոյական իր համեստ օժանդակությունը: Հոգելուս կաթողիկոսի հայրենական պատգամը՝ «Հայ ժողովրդի հետ հանուն հայ հայրենիքի», լայն արձագանք գտավ Հայաստանում և ափյուրքում: Մայր

Աթոռ ս. Էջմիածինը, մնալով հավատարիմ իր լուսաբնակ և ովատապահ հայրապետների հայրենասիրությանը, կատարեց իր պարտքը ժողովրդի ու հայրենիքի հանդեպ պատերազմի դժվարին տարիներին:

Հարգելի հանդիսականներ, այսօր, երբ Օշում ենք ձեզ հետ միասին Ապրիլան մեծ եղեռնի 60-ամյակը և Հայրենական պատերազմի հաղթական 30-րդ տարեդարձը, եկեք բոլորս միասին բարի կամք ցուցաբերենք՝ ամրոշ աշխարհում խաղաղությունը պահպանելու վսեմ գործում, որովհետև խաղաղությունը անհատների սերն է, ընտանիքների երշանկությունը, պետությունը:



Կարապի լիճը. Երևան

Աերի բարի կամեցողության և համերաշխ գործակցության միակ գրավականն ու երաշխիքը:

«Երանի խաղաղաբարաց, զի նոքա որդիք Աստուծոյ կոչեսցին» (Մատթ. Ե 9):

Վեհափառ Տե՛ր, թույլ տվեք այս հանդիսավոր երեկոն հայտարարել բացված»:

Այնուհետև «Եղեռնը և մեր ազգային վերածնունդը» թեմային նվիրված գեղեցիկ գեկուցով հանդես է գալիս Մայր Այոռոյի դիվանապետ և Միջեկենցական հարաբերությունների բաժնի վարիչ տ. Արսեն Եպս. Բերբերյանը:

Տ. Արսեն Եպս. Բերբերյանի եղույթը

«Կանգնած ենք Ապրիլան նահատակների 60-ամյակի սեմին:

Իբրև ժողովորդ և եկեղեցի, հայրենիքի և ափյուռքի երախտագետ մեռ զավակները, միակամ և միասիրտ, իրենց նոգու աչքերով տեսնում են 60 տարիներ առաջ իրենց պատմական հայրենիքի հողի ու օջախները ներկված կարմիր արյամբ, լուս աղետից և մահվան ճրաներից ազատվել փորձող իրենց հարազատների վերջին ճիշերը:

Ծանր, մահաշունչ արձագանքներ են գալիս մեր ականջներին նահատակների անծաղրածիր գերեզմանցից՝ պատրիա Արևմտյան Հայաստանից: Ամայի ու անբարեքեր, մոխրացած տարածություն են դարձել երբեմնի մեր ծաղկուն բուրաստանները՝ մեր հայրենի երկիրը: Այսօր մոխրացած ու խոպան այդ տարածությունը ծածկված է մոլախուերով անհնամ: Չարագուշակ ագռավներն են կոնչում անհրապուր դարձած մեր հայրենի երկնակամարի տակ: Եվ այս բոլորը հետևանքը եղավ թուրքական կառավարողների կողմից կանխանածված ոճրագործության:

Մարդիկ, անկախ իրենց ազգությունից և դավանանքից, ծանրժանապով մեր ժողովրդի՝ նահատակություններով լի պատմությանը, պիտի համոզվեն, որ տիեզերքը չի տեսել ցեղասպանությունների այնպիսի անոնքի ձևեր, որոնց յուրաքանչյուր դրվագը սոսկումով պիտի լցնի մարդկանց հոգիները, ու նրանք պիտի շիավատան, որ այս անահման տիեզերքի հրաշալի հանակարգության մեջ մարդ արարածը՝ ամենակատարյալ ատեղձագործությունը, կարող է աղավաղել տիեզերական ներդաշնակության ըմբռնումը:

Կողենայինք մի քանի պատմական վկայություններ բնրել՝ միայն հաստատելու համար մեր նշան հշմարտությունները:

Օսմանյան Կայսրության ծանր լծի տակ ապրող բազմաթիվ մեծ ու փոքր ժողովորդներ, ավելի քան հինգ հարյուր տարի գրկանքներից հետո, իրենց վերջին ճիգերն էին գործադրում ձեռք բերելու իրենց անկախությունը:

Հայ ժողովորդը նոյնպես ձգտում էր հայկական գալատներում ձեռք բերել ինքնավարություն: Թուրքի սնանկացած կայսերական պետության կողմից այդ նկատմաց քաղաքական ուսևածքություն և հետևանքը եղավ կազմակերպված պաշտոնական ջարդը հայ ժողովորդի դեմ:

1876 թվականին երբ սովորան Արդու Համբոր գահ բարձրացավ, Թուրքայում ապրող քրիստոնյա փոքրամասնությունների նկատմամբ որևէ բարյացակամ, դրական վերաբերմունք հանդես չըերեց, առավել ևս՝ հայ հաստակների նկատմամբ: Ընդհակառակն, նա որոշել էր գրկել նրանց ուժից:

1894—95 թվականներին Սասունում, այնուհետև հայկական մյուս գալատներում սկսվեց կազմակերպված ջարդը: Այս բոլոր կատարվում էր խաղաղ, անզեն քաղաքացիների նկատմամբ: Հայահալած այս քաղաքականությունը գործադրվում էր կենտրոնական կառավարության հատուկ ծրագրով և նրա հսկողության ներքո: Վերջապես 1896 թվականին տեղի ունեցավ Կ. Պոլս մեծ կոտորածը, որը գոհվեցին ավելի քան հարյուր հազար հայեր: Սովորան գահընկեց եղավ 1908 թվականին: Ծնունդ առան նոր հովսեր ամբողջ երկրով մեկ: Հուսադրվեցին նաև հայերը, սակայն հուսախարությունը շոշացավ: 1909 թ. հաջորդեցին Արտանայի արյունու ջարդերը:

1915 թվական: Արյունով գրված հայ ժողովորդի պատմության ամենալաւ էջը, նաև՝ մեծագույն ամոթը քաղաքակիրթ աշխարհի: Կազմված էր հայ ժողովորդին ընդմիջու բնաշնչելու իրթիհատի կենտրոնի որոշումը: Բոնկվել էր առաջին համաշխարհային պատերազմը: Հարմար էր պահը գործադրելու հրեշավոր կանխամտածված ծրագիրը:

1915 թվական. ապրիլի 24: Տեղահանություն ողջ Արևմտյան Հայաստանում, տարագրություն և աքսոր: Հայ ժողովորդը Տեր-Լը-Զորի մեջ և այլ արտորավայրերում իր մահիման վերջին շոնչն էր փշում ու պայքարում կյանքի համար: Ծանր, ողբերգական օրեր էին: Հայ ժողովորդի լինելու և չինելու հարցն էր դրված պատմության առաջ:

Անմ' թե ինչ են գրում մեր տարագրության և համատակության մասին օտար ականատեսները.

Դոկտոր Խոհաննես Լեպսիոս. «Անկարելի է նկարագրել այն անձնությունները, որոնց միջով անցնում էին տառապյալները: Բոնաբարություններ կանաց և երիտասարդ աղջկների, առևանգումներ, բռնադատյալ կրոնափոխություններ ստուգ մասից ազատվելու համար: Մանուկներ են վաճառվուն հաճախակի սովոր շմահանալու համար: Մազեր և եղունգներ քաշելու հրաշեկ երկաթյա գործիքներ են օգտագործվում կանաց ու մանուկների նկատմամբ և ամեն կարգի խայտառակություններ են կատարվում:



Վ. Ի. Լեպսինի անվան հանրապետական միվանդանոցը. Երևան

Երբեք այս տեսարանը չեմ մոռանալու. կատարյալ մի լուսության մեջ առաջանում էին մանուկները, ծերերը, որոնք դժվարությամբ էին կարողանում իրենք իրենց պահել, որպեսզի բոլորն էլ միմյանց կապված ժայռերի բարձումներից Եփրատի ալիքների մեջ գահավիժեն, Քեմախ Պու Լազի այս անհծյալ հովտում»:

«Հայը տիեզերքի չափ սիրտ պետք է ունենա, որ կարողանա այս ցավերին դիմանալ»—ասում էր Խանհակյանը, երբ մտաքերում էր հայ ժողովրդի մեծ տառապանքը:

Ու այսպէս անայնում էր մեր հայրենի բնաշխարհը իր բնակիչներից, ու քանդվում էին հազարամյակների միջով ստեղծված հայ քաղաքակրթության արժեքները: Այն, ինչ կատարվեց, մեր պատմության մեջ մոռացության մատնեց բոլոր հախմանաց արհավիրքները, ոչ միայն մեր վշտի ու տառապանքի նկարագրություններով:

Հայ ժողովուրդը Մեծ եղեռնին զոհ տվեց նաև իր մտավորականության ծաղիկը, արևմտահայ ծաղկող նոր գրականության պայծառ ներկայացուցիչներին: Եղեռնին զոհ գնացին ավելի քան 4000 հայ նոգերականներ, քանդ-

վեցին ու հիմնահատակ կործանվեցին շուրջ 2000 վանքեր, եկեղեցիներ, պատմական մնացած հուշարձաններ: Ոչնչացվեցին ու թալանվեցին հայ մտքի ստեղծած փառավոր ձեռագիր մատյաններ և արվեստի այլ արժեքներ: Իսկ անհաջող էին հայ ժողովրդի հյութական կորուստները:

Թեև Ապրիլյան եղենուր ֆիզիկական իմաստով մեր պատմության ամենամոռ էջն էր, բայց այն միաժամանակ բացահայտեց մեր ժողովրդի խիզախ ու անմեռ ոգին, որի շնորհիվ նա կրկին անգամ նվաճեց արևի տակ առարինությամբ ապրելու իր արդար իրավունքը:

Վաթուն տարիներ են անցել աղեստավի այդ օրերից, սակայն մենք՝ ապրող ու շնորհ ներկա սերունդու, չենք կարող մոռանալ այդ ողբերգությունը: Այսօր ամեն մի հայի աշքերում հարգանքի արցունք կա դեպի մեր նաևատակները:

Զարմանալին այն է, որ քաղաքակիրթ կոչված աշխարհի առաջ այսօր էլ լինում են փորձեր՝ որանպէս հայկական կոտորածները: Սակայն նրանք մոռանում են ոճագործ ժողովրդի այն հայուարարությունը, թե՝ «Հայերի հանդեպ մեր վարմունքը հիմնված է երեք կետերի վրա. նախ հայերը որոշել են մեր տիրապետությունից բաժանվել և անկախ մի պետություն ստեղծել, և ի վերջո բացեիրաց օգնել են մեր թշնամիներին, Կովկասի մեջ օժանդակել ուսւներին և դրանով պատճառ եղան մեր ձախողանքներին: Ուրեմն, մենք անդառնալի որոշում ենք տվել պատերազմի վախճանից առաջ, անզոր դարձնել նրանց: Զարծի փաստել, մենք արդեն հայերի 3/4-ի հարցը լուծել-վերջացրել ենք, այլևս ո՞չ Բաղեշի, ո՞չ Վանի և ո՞չ էլ Էրզրումի մեջ հայեր չկան: Երկու ցեղերի մեջ ատելությունն այնքան բուռն է, որ մենք պարտավոր ենք փակել նրանց հարցը, ապա թե ոչ՝ ստիպված ենք նրանց վրիժառությունից վախենալ...: Այս, շատ սխալներ ենք գործել, բայց երբեք չենք ցավում մենք դրանց համար... Որովհետև այսօրվա անմեղները թերևս վաղվա հանցավորները պիտի լինեն»:

Եղենին այդ սև և մոռալ օրերին հայ ժողովուրդը հանդես բերեց իր պատմության հավատարիմ ազգային ինքնապաշտպանության հիմնալի օրինակներ:

Դարերի փորձը ցուց է տվել, որ հայ ժողովուրդը կարողացել է միշտ իր գողգոթան վերածել հարության և իր նահատակությունը՝ հաղթանակի, ազգային վերածնության: «Մահուամբ զմահ կոխեաց»: Խմացյալ մահը մեր ժողովուրդի համար եղել է նրա անմահության վեմ-խարիսխը:

Մուսա Լեռան, Եղեսիո, Ուրֆայի, Սասունի, Վանի, Այնիքավի և այլ գավառների ինքնապաշտպանության օրինակները փառավոր և անմոռանալի էջեր են կազմում մեր ազգային-պատագրական պատմության:

Եվ ահա կատարվեց նոյնը Եղենին հաջորդող տարիներին: Նահատակության ճանապարհի վրա հայ ժողովուրդը վերագրուավ իր կամքի միասնականությունը և ապրելու վեռականությունը: Նահատակությունը հրաշափոխեց հայ հոգին՝ ավելի ուժեղացնելով մեր ատեղծագործական կարողությունները և կունենով մեր ապրելու կամքը: Մեր նահատակների մարող աշքերում լուսի և հուսի վերջին մնացորդը մեզ ցուց տվեց այն ճանապարհը, որին պետք է հետևեինք մեր մեծ երազների իրականացման համար:

Մեր ժողովուրդի կարևոր մեկ հատվածը, նեռու հայրենի հողից, օտար երկրների տակ էլ կարողացավ ու դեռ պիտի շարունակի հայ մնալ՝ պահպանով հոգևոր և հայրենասիրական ավանդները մեր բյուրավոր նահատակների:

Այսօր հայ ժողովրդի զավակները, Դրասիանակերտցի կաթողիկոսի խոսքերով, «Արտափայլեցին իբրև զարեգակն ի մէջ տիեզերաց, որոց և անուանք նոցա գրեալ են ի դպրութեան կենաց»: Այսինքն այն անվանի հայորդիները, որոնք աշխարհով մեկ իրենց ստեղծագործական նվաճումներով ներդրում են կատարում ժամանակակից համաշխարհային մշակույթի ու գիտության մեջ, հավատալի չեն, որ նրանք կարող են մահվան դեմ պայքարող ուժապատ հայ կանանց թափառական զավակները լինել:



Արտաքանության ինստիտուտը. Երևան

Մեր նահատակների երազն էր՝ չթուլացող սիրով, խանդաղատանքով ու հպարտությամբ բոլոր հայերի հայացքը սևուկած տեսնել նորաստեղծ հայրենիքի կենդանարար իրականության վրա: Դա պայօնվա մեր ազատագրված հայրենիքն է, Սովետական Հայաստանը:

Այսօր Արարատի փեշերին Եղեռնի մնացորդացով և աճող նոր սերնդով ստվարացած շուրջ երեք միլիոն հայեր են ապրում ստեղծագործական կյանքով՝ համաշխարհային մշակույթին ու քաղաքակրթությանը տալով փառապահ անուններ բոլոր քնագավառներում:

Մենք հայրենիքում և սիրություն մեր նվաճումներով հավերժացնում ենք մեր նահատակների անունները և նրանց վրեմյա լուծում ապրելով և ստեղծագործելով:

Ինչպես ասել է մեր մեծ Վարդեսը՝ Մարտիրոս Սարյանը, «Այս, մենք գիտենք տառապանքը իմաստության, բարության վերափոխելու գաղտնիքը։ Մեր ժողովորդը կարողացավ իր արցունքների կարիների մեջ շատ ու շատ արևներ անդրադարձնել։»

Ես ինարկել այդ մեր մեծ վիշտը նկարել եմ, այս, նկարել եմ, որովհետև հայերի աչքեր եմ նկարել, իսկ ամեն մի հայի աչքի մեջ մեր դարավոր վշտի կուտակումը, խուցումը կա և այն արցունքը, որի կարինի մեջ շատ ու շատ արևներ են անդրադարձնում։»

Հայ հայտնի գրող Մայր Սոլենի որդին, որը կրում է իր հոր՝ նոյն անոնքը, «Դիմ Նյու-Յորքոր» շարաթաթերթի փետրվարի 3, 10, 17-ի համարներում երկար է գրում իր ժողովրդի հերոսապատում ու հարուստ պատմության մասին և մանավանդ այն մասին, թե ինչպես ինքը, իբրև հայ, իր ինքնությունն է գտնում հայրենիք իր այցելությունից հետո։ Նա գեղեցկորեն նկարագրում է, թե ինչպես Նյու-Յորքում առաջին անգամ հանդիպելով մի հայ մարդու, նրա պատմածներից ծանր տպավորություն է կրում պատմական Հայաստանի և այնուել ապրած հայ ժողովրդի կրած տառապանքների մասին։ Ու մտածում է ինքն իրեն, թե Հայաստանում ապրող պարունական մարդը չի կարող լինել այնպիսին, ինչպես նյու-յորքցի այդ մարդն է, և ոչ ել Հայաստանը այնպիսին, ինչպես նա ներկայացրել է իրեն։ «Պատմություններ չար ժամանակների, մուլթ ներքնաշխարհ, ու երկարապատում մրմունչներ հին մարդկանց»։ Եվ իսկապես Հայաստան այցելելիս նա գտնում է հայրենիքի և հայ ժողովրդի մասին իր լավատեսական ակնկալությունները։

Սպրիլան եղենից մինչև մեր օրերը պատմական շատ կարճ մի ժամանակաշրջան է, մի ակնյարթ միայն պատմության մեջ։ Բայց այս կարճ ժամանակամիջոցում ինչ որ ձեռք է բերել մեր ժողովուրդը հայրենիքում, ավելի է, քան հրաշքը։ Հայ ժողովորդը, դարերի այս անխոնզ ողելիցը, դեռևս շարունակում է ստեղծագործել երիտասարդական անսպառ ավլունով։

Հայրենի ծաղկուն իրականության կողքին և իր արժանընտիր գահակալը՝ Ամենայն Հայոց Հայրապետը, ավելի քան երեք հապարտ և զորավոր են գգում իրենց։ Հայոց հոգևոր կենտրոնը վերածնված հայրենիքի կողքին ապրում է իր նոգեոր, մշակութային վերելքը։ Զկան Արևանտյան Հայաստանի մեր երեմնի փառավոր ու շեն վանքերն ու եկեղեցիները։ Նրանց նոգեոր, մշակութային, հայրենասիրական առաքելությունն իր վրա է վերցրել Մայր Աթոռ և Էջմիածինը։ Ու Մայր Աթոռը Ամենայն Հայոց կաթողիկոս S. S. Վազգեն Ա-ի գահակալության քանի տարիների ընթացքում փառուվ ու պատվով կատարեց իր առաքելությունը հայրենիքի և մեր ժողովրդի հանդեպ։

Այս պայծառ իրականության ու առավել պայծառ ապագայի տեսիլքի առաջ ինչքան դատապարտելի է հայրենիքը լրող մի շարք ողելիորուս հայերի վերաբերմունքը, մարդիկ, որոնք, ոտնակողինելով հայրենական սրբությունները, դրանով իսկ ուրանում և նույնացնում են մեր բյուրավոր համատակների հիշատակը, նահատակներ, որոնց թվում էին նաև նրանց ծնողները։

Ու մենք՝ հայրենաբնակներս, նայում ենք առաջ, քանի որ Հայաստանը, ինչպես փարոս, լուսավորում է հայոց երթուղին, միավորում աշխարհով մեկ ցրված ամրող մեր ժողովրդին հայրենի մեկ պետականության դրոշի տակ։ Ու մեր չքնաղ երկիրն իր գոյության իսկ փաստով, իր ձեռքբերած նվաճումներով և իր զավակների սխրանքներով հանդիսանում է մեր անթաղ համատակների հիշատակին կանգնեցված անձեռակերտ հուշարձան։

Ամենայն Հայոց S. S. Վազգեն Ա. կաթողիկոսը 1975 թ. նոր տարվա առթիվ արտասանած իր քարոզի մեջ պատգամում էր. «Տարին մեկ անգամ, ամեն ապրիլի 24-ին, հայ ժողովուրդը մի պահ կանգ է առնում և հարգանքով խոնարհվում իր նահատակների հիշատակի առաջ: Դա մարդկային է, դա քրիստոնեական է, դա բարոյական է: Այդ է թելադրում նաև մեր օրերի խաղաղասիրության և ժողովուրդների բարեկամության գիտակցությունը: Եվ կարծում ենք ու սպասում, որ ոչ միայն մենք՝ հայերս, այլև բոլոր ժողովուրդները, բոլոր ազնիվ մարդիկ իրենց աղոթքներով միանան մեզ և մեր արդար դասին, որպեսզի հետ այսու այլև երբեք և ոչ մի տեղ աշխարհում չկրկնվին Տեր-Էլ-Զորներ և Առաջապեսներ, Ռաստլայններ և Մայստաներներ...»:

Ահա թե ինչո՞ւ մեր եկեղեցին և հայությունը համայն, ի Հայատան և ի սփյուռք աշխարհի, կանգնած Ապրիլյան եղեննի վաթունամյակի սեմին, երկուողածությամբ պիտի ոգեկոչեն այս տարի հիշատակը մոտ երկու միլիոն իրենց զոհված զավակների, ու ապա միմիշտարված սրտով փառք պիտի տան հախախնամության՝ որ ամրակուռ ու ապահով հիմքերի վրա հաստատված իրենց արդի մայր հայրենիքը՝ ամենափորավոր կողողն է նահատակների հիշատակը հավերժացնող և ամենազորավոր գրավականը ազգային գոյացման, այլ և ամենաուղիղ ճանապարհը մեր ժողովուրդի բոլոր արդար երազանքների կենսագործման՝ գալիք ժամանակներին...»:

Խո՞նկ և աղո՞ք Ապրիլյան մեր նահատակների հիշատակին:

Հավերժական փա՞ռք ապրող ու շնորհ, ծաղկող, բարգավաճող և առևականացող մեր մայր հայրենիքին՝ Սովետական Հայատանին:

Արարատյան թեմի առաջնորդական փոխանորդ՝ տ. Կոմիտաս արքեպ. Տեր-Ստեփանյանի բովանդակալից զեկուցումը նվիրված էր «Մեծ հայութանակի 30-ամյակն են նշում Սովետական Միության զինված ուժերը և մեր մեծ հայրենիքի եղբայրական բոլոր ժողովուրդները»:

S. Կոմիտաս արքեպ. Տեր-Ստեփանյանի ելույթը

««Մեր սուրբ փառքով դրեցինք պատյան»
(Ավ. Խահակյան, 1945 թ. մայիսի 19)

Հայրենական պատերազմում տարած պատմական հայութանակի 30-ամյակն են նշում Սովետական Միության զինված ուժերը և մեր մեծ հայրենիքի եղբայրական բոլոր ժողովուրդները:

Սովորույան Մայր տաճարում, Հայոց հայրենական Հայրապետի նախագահությամբ, ս. պատարագի մատուցումով, քարոզով և հանդիսավոր հոգեհանգստյան պաշտոնի կատարմամբ ոգեկոչեցինք պայծառ հիշատակը մարտում հանուն հայրենիքի եերոսաբար ընկած մարտիկների:

Այժմ, Վեհարանի այս հանդիսությանց դահլիճում, սուրբ Էջմիածնի դարավոր կամարների մերքու, կրկին անգամ հավաքվել ենք՝ նշելու ֆաշիզմի դեմ սովետական զինված ուժերի տարած պատմական մեծ հայութանակի 30-ամյակը:

Մայիսի 9-ն է, մեծ հայութանակի բերկրատիթ տարեղարձը, որը մեզ հետ միասին նշում են աշխարհի բոլոր խաղաղասեր ժողովուրդները, որոնց համար թանկ է հայրենիքը և ազատությունը:

1941—1945 թվականներին, Հայրենական պատերազմի ծանր օրերին, ահավոր փորձություն էր կախվել մեր հայրենիքի վրա:

Պատերազմ էր, ահավոր կոիվ, որն իր նմանը շուներ աշխարհի և ժողովորդների պատմության մեջ:

Ու մարտի ելան մեծ մեծ հայրենիքի բոլոր ժողովորդները միասիրս ու միախամ պաշտպանելու հայրենին, սերունդների աշխատանքով ստեղծված դարավոր մշակույթն ու բաղաքակրթությունը, մեր ժողովորդների ազատությունն ու անկախությունը:

Ամբողջ հինգ տարի կյանքի ու մահվան ահավոր կոիվ մղվեց: Հայրենիքի միլիոնավոր զավակներ ընկան մարտի դաշտում, տասնյակ հազարավոր բաղաքներ, գյուղեր կործանվեցին: Հայրենիքը անհամար հյութական կորուսներ կրեց, բայց իրենց հայրենի ավանդներին և սրբություններին հայլատարիմ սովորական ժողովորդներին ի վերջո ծնկի բերեցին ահավոր թշնամուն և ապահովեցին հաղթանակն ու ցանկալի ազատությունը:

Հայրենական պատերազմում տարված պատմական հաղթանակի մեջ իրենց արժանի ու փառավոր տեղը գրավեցին միութենական բոլոր ժողովորդները, որոնցից յուրաքանչյուրն իր մարտական ավանդը մուծեց հաղթանակի համբնդիանոր գործի մեջ:

Փառավոր են ու սկսակերով լի Հայրենական պատերազմի պատմության էջերը, երբ մարտի դաշտում հրաշքի համազոր քաջազործություններ էին կատարում սովորական զինված ուժերը՝ հանուն հայրենիքի և հոգևոր, մշակութային արժեքների պաշտպանության:

Միայն հոգևոր արժեքներ ստեղծող ժողովորդները կարող են հասկանալ, թե ինչո՞ւ և ինչպես սովորական բանակները և միութենական ժողովորդները կարողացան դիմադրել ֆաշիստական հզոր բանակների հարձակմանը և իրենց կյանքի գնով ապահովել հաղթանակը:

Ահա թե ինչու կողք-կողքի կովում էին եղբայրուն մեր հայրենիքի բոլոր զավակները՝ ուսւն ու ուկրաինացին, ոգբեկն ու թաթարը, հայն ու վրացին և եղբայրական մյուս ժողովորդների հերոս զավակները՝ հանուն հայրենիքի և մեր ապագա երջանիկ կյանքի:

Սովորական բազմազգ ժողովորդը թե՛ ուզմաճակատում և թե՛ թիկունքում ցուց տվեց անկրկնելի հերոսության, հայրենիքին նվիրվածության սրանշելի օրինակներ:

Եվ ահեղ պատերազմի այդ նրբեներում և մրրիկներում է՛լ ավելի կոփեց ու անխորտակելի դարձալ եղբայրական ժողովորդների անքաղտելի բարեկամությունը:

Հայրանակը ձեռք բերվեց արյան ճանապարհով, գրկանքներով, ծանր գոհոնությունների գնով:

Ընկան շատերը հերոսի մահով՝ հայրանակի հայլատն իրենց սրտերում:

Հայրենիքը չմոռացավ իր հերոս զավակների սրբագործությունը:

Մարտի դաշտում, հանուն հայրենիքի և նրա ազատության, ընկած հերոսների հիշատակը սուրբ է մեզ համար:

Զոհվածներն ապրում են մեզ հետ: Մեր երկի արձանագրած հայրենաշեն յուրաքանչյուր նվաճման մեջ, հայրանակների մեջ ներկա է մեր հերոսների սիրանքը: Նրանց հիշատակի ոգեկոչումով է՛լ ավելի է գեղեցկանուն և հայրանակի այս օրը, և՛ հայրանակի ամեն մի տարի:

Երեսուն տարիներ են մեզ բաժանում հայրանակի այդ օրից:

Որպան հեռանում ենք Հայրենական պատերազմի ահեղ օրերից, ծանր իրադարձություններից, այնքան ավելի է վեհանում և պայծառանում հայրա-

նակի բերկրանքը, սովետական եղբայրական ժողովուրդների անմահ սրխ-
րանքի մեծությունը:

Հաղթանակի վեճությունը որոշվում է նաև նրա համաշխարհային պատ-
մական նշանակությամբ:

Հաղթանակը բաց արեց շատ երկրների ժողովուրդների համար ազատու-
թյան, անկախության, ազգային-ազատագրական շարժման. հառաջադիմո-
թյան և աշխարհում կայում ու երկարատև խաղաղության հուսալի ուղին:

Սովետական զինված ուժերի հաղթանակով որոշվում էր նաև ոչ միայն
բազում ժողովուրդների ճակատագրերը, այլ նաև քաղաքակրթության բախտը,
մարդկության բախտը:

Ֆաշիզմի դեմ մղված ազատագրական մարտերում և մեծ հաղթանակի
մեջ եղբայրական ժողովուրդների շարքերում մարտական իր արժանի տեղն
է գրավում նաև նայ ժողովուրդը:

Հայրենական պատերազմի պատմության էջերում ուկի տառերով են
գրված նաև նայ ժողովուրդի զավակների հերոսական սխրագործությունները:

Պատերազմի արվեստն ուսած նայ գեներալների, բարձրաստիճան սպա-
ների և շարքային զինվորների մի փառավոր փաղանգ մասնակցեց մարտե-
րին և թշնամուն հասցրեց արժանի հարված՝ ի հատուցումն նրա չարագոր-
ծությունների և ոխտադրության:

Ծիշու է ասել բանաստեղծը.

«Մենք խաղաղ էինք մեր լեռների պես,
Դուք՝ հողմերի պես խուեցիք վայրագ:
Մենք ձեր դեմ ելանք մեր լեռների պես,
Դուք՝ հողմերի պես ոռնացիք վայրագ:
Բայց մենք հավերժ ենք մեր լեռների պես,
Դուք՝ հողմերի պես կերչեք վայրագ»:
(Հովհաննես Շիրազ)

Ծիշու է ասել Վարպետը՝ Ավետիք Խահակյանը, մեծ հաղթանակի առ-
թիվ գրած իր գեղեցիկ բանաստեղծության մեջ.

«Մեր սուրբ փառքով դրեցինք պատյան,
Մեծ հաղթանակի օրն է ցնծալից...»:

Հայ ժողովուրդն էլ տվեց իր նահատակները Հայրենական պատերազ-
մում, և նրանց «արյան հեղմամբ» հեշտացավ հաղթանակը հայրենիքի:

Հայրենական մեծ հաղթանակի մեջ իր արժանի բաժինն ունեցավ նաև
Մայր Աթոռը և նրա օրինության ու դեկալարության ներքո՝ Հայաստանյաց
առաքելական եկեղեցին և սփյուռքի հայությունը:

40-ական թվականներին Ամենայն Հայոց Հայրապետության Աթոռը թա-
փուր էր, սակայն նրա նեկավարությունը վստահվել էր ազգընտիր տեղակալ
տ. Գևորգ Արքեպիսկոպոս Չորեքշահին, մի անձնվեր, հայրենասեր ու իր
պաշտոնը փառավորող նայ հոգևորականի, որը և, իր կողքին ունենալով
հայրենի ծանոթ դեմքեր՝ Ավետիք Խահակյանին, Ստեփան Մալխասյանցին,
Երվանդ Շահազիզին, Ստեփան Կամսարականին, Առաքել Առաքելյանին,
Աշոտ Աքրահամյանին, որպես անմիջական անդամներ Գերագոյն հոգևոր
խորհրդի և գործակիցների, կազմակերպում է Հայաստանյաց եկեղեցու և
հավատացլաների հյութական ու բարոյական աշակցությունը՝ լիարուն բե-
րելով այն ի նպաստ սովետական բանակի հաղթանակին: Նա 1941 թվականի

հուլիսի 30-ի, 1943 թվականի հունվարի 30-ի և փետրվարի 2-ի երեք կոչերով դիմում է բովանդակ հայությանը. «Լասն Սիոնի ոչ լեցից և վասն Երուսա-ղեմի ոչ ներեցից...»: Եվ այսպես մարգարտի հատիկների նման իրար եռկից շարամիություն են նրա խոները՝ ի պաշտպանություն հայրենի երկրի ու նրա սրբությունների: Նա իր առաջին կոչում մեջքերում է անուն ուկեծդի Եղի-շեմից. «Թող մեր արյունը թափվի մարտիրոսների արյան նման, միայն թե մեր հայրենիքն ու եկեղեցին շընկն նեթանունների ձեռքբ»: Մեր նախնիք, գրում է նա, այդ ոգով դարեր շարունակ կյանքի ու մահվան պայքար են մղել բազ-մաթիվ բռնակալների դեմ հանուն հայրենիքի, հանուն մեր հավատքի ու խղճի ազատության միշտ բողոքելով անարդարությունների և օտար բռնա-կալության դեմ, որը «մարմնի գերության նետ հոգու գերության էր ձգում»: Անա այսպիսի գերության դեմ պայքարել են մեր նախնիք: «Նման առիթնե-րուի հայ եկեղեցին անցյալում միշտ օրինել է հայ ժողովրդի դիմակալության ոգին, ներշնչել ազգային անկախության գաղափարը, մշակել ազգային ինք-նագիտակցության զգացումը և խաչն ու Ավետարանը ձեռքին, բազալերելով հայ զորքը, դեպի հաղթություն է առաջնորդել նրան»:

«Մեր օրերին հանենս է եկել մի նոր բիրու ուժ՝ ֆաշիզմը, որը հակառակ է ազատության, կուլտուրային, թշնամի է քրիստոնեական եկեղեցուն և բոլոր մարդկությանը: Ֆաշիզմը կրողն է բռնապետության և պատերազմի, դա կո-ղուպուտի և մահվան դրույթ է: Անա այդ ֆաշիզմն է, որ նենգաբար ներխու-ժել է մեր երկիրը, Խորհրդային Սիոնթյան երկիրը՝ ավեր ու մաս բերելով իր նետ նաև Հայաստանի հանրապետությանը»:

Աջակցել Խորհրդային Սիոնթյան, հշանակում է աջակցել հայրենիքին: Խորհրդային Սիոնթյան հաղթանակը հաղթանակն է նաև հայ ժողովրդի»:

Իր երկրորդ և երրորդ կոչերով Գևորգ արքեաւ. Զորեքչյանը դիմում է հայ ժողովրդին թե՛ ի հայրենիս և թե՛ ի սփյուռ աշխարհի, որ «իր առաս դրա-մական օգնությամբ աջակցի տանկային շարապունների և ինքնաթիռների արտադրությունը զորացնելու, թշնամուն վախճանական հարված հասցնելու համար, որպեսզի ահոելի պատերազմը վերջանա մեր հաղթությամբ ու մեր հայրենիքը ազատվի, մեր պատիվը պաշտպանվի և ապագա տևողական խա-ղաղության ընթացքում վերաշինենք մեր ավերը, վերակառուցնենք կուլտուրա-կան կորուստները, ևս առավել բարեկալինենք մեր տնտեսական դրությունը ն աշխարհի բոլոր ազգերի հետ համերաշխ ապրենեք, վայելելով ազատություն ու բարօր կյանք»: Ու որպեսզի իր կոչերն ու այլնայլ առիթներով հղած իր գրությունները առավել արդյունավետ լինեն, ոգեշնչեն բոլորի սրտերը, ազգ-ընտիր տեղակալը կարգադրում է.

Մայր Արքունի կողմից կատարված նվիրատվությամբ աջակցել Հայրենա-կան պատերազմի հաջողությանը:

1944 թվականի փետրվարի 4-ին տ. Գևորգ արքեպիսկոպոս Զորեքչյանի՝ Ավետիք Խահակյանին տված պատունական հարցազրուցի մեջ կարդում ենք.

«Կաթողիկոսարանը գիտակից հայրենասիրական պարտքին պատե-րազմի առաջին ամիսներում նվիրեց հայրենիքի պաշտպանության կարիք-ներին պատմական և հնագիտական արժեք ներկայացնող զգալի քանակու-թյամբ արծաթեղեն ու պղնձեղեն, իսկ հետո «Սասունցի Դավիթ» անունով տանկային շարապուն կառուցելու ֆոնդին թանկարժեք իրեր՝ ութ հարյուր հազար ոորթի արժությամբ, 75000 ոորթի հնչյուն դրամ և 1000 անգիա-կան ստերլինգ»:

Սզգընտիր տեղակրպը կարգադրում է պետական բանկում հասող հաշիվ բացել ու Հայաստանյաց եկեղեցիներում կատարվող բոլոր տեսակի ծիսակատարություններից ստացվող գումարների կեսը հատկացնել սովետական բանակին, ինչպես նաև հայ հավատացյալներից այդ նպատակով եղած նվիրատվությունները:

Ու ամենակարևորը՝ կոչ է անում մեր սփյուռքի հայությանը, որ իր հյութական օգնությունը բերի սովետական բանակին:

Սիյուռքի ողջ հայությունն իր կրոնական կենտրոններով, հոգևոր առաջնորդներով, ազգային ու եկեղեցական մարմիններով լծվում է հայրենանունք այս կոչը պատվով կատարելու աշխատանքին:

Սյապիսով հաստատվեց ու ճշմարտվեց ազգընտիր տեղակալ Չորեքշյան արքեպիսկոպոսի խոսքը, թե «ուր էլ լինի հայը, չունի այլ հայրենիք, բացի Խորհրդապին Հայաստանից... և թե աշխարհի բոլոր հայության պարտքն է ամեն կերպ փրկելու հայրենիքի պատիվն ու անկախությունը»:

Սիյուռքահայությունը պատվով կատարեց իր պարտականությունը՝ ընդուռաջենով հայրենիքի ու Մայր Աթոռի կոչին: Ահա ցուցակն այն գաղթօջախների, որոնք իրենց նվիրատվություններով մասնակցեցին ու հյութական օգնություն բերեցին Հայրենական մեծ պատերազմի շուտափության հայթանակին: Նրանց կատարած դրամական հանգանակություններով և նվիրատվություններով կառուցվել ու ուզմանակատ են ուղարկվել «Սատունցի Դավիթ» անվան երկու տանկային շարայլուն: Պատերազմի սկզբից մինչև 1944 թվականի մարտ ամիսը մուծվել է՝

ա. Ամերիկայի Միացյալ Նահանգների հայերից՝ 115000 դոլար.

բ. Իրանահայերից՝ 2867450 դիմար.

գ. Կիպրոսահայերից՝ 3100 անգլիական ոսկի.

դ. Հորդանանի հայերից՝ 2000 անգլիական ոսկի.

ե. Սիրիահայերից՝ 275831 սիրիական ոսկի.

զ. Լիբանանի հայերից՝ 120000 լիբանանյան ոսկի.

է. Իրաքի հայերից՝ 1500 դիմար.

ը. Եթովպահայերից՝ 1300 անգլիական ոսկի:

Բացի այդ Ամերիկայի հայերը սովետական բանակի ֆոնդին են մուծել 173000 դոլար:

Ծշմարտապես հուզիչ է այս պատկերը: Մեր աշքի առաջն է ամրող աշխարհի քարտեզի վրա ճակատագրի չար կատակով ինչպես աստղագիուն ցրված հայ ժողովրդի զավակները, հարուստ թե աղքատ, այր թե կին, երիտասարդ թե ծեր, որոնք առանց դավանանքի խորության, լսեցին ու սիրով հնազանդվեցին տեղակալ պրազանի հայրենասիրական կոչերին, դարձան միակամ ու իրենց խնայողությունները ուղարկեցին հայրենիք:

Մայր Աթոռի և սիյուռքի հայության հայրենասիրական գործունեությունը չերտորեն արժանանում է հայրենի և կենտրոնական կառավարության երախտագիտության ու շնորհակալությանը:

Մեծ հայթանակի օրերից հետո էլ, անցնող 30 տարիների ընթացքում, Մայր Աթոռը խաղաղ ու ապահով պայմաններում շարունակեց իր հայրենասիրական, խաղաղասիրական գործունեությունը, մասնավոր Տ. Տ. Վազգեն Ա հայրենասեր կաթողիկոսի գահակալության 20 տարիների ժամանակաշրջանում:

Հայոց Հայրապետը Մայր տաճարում, Զատկի տոնի առթիվ, իր գեղեց-

կահյուս քարոզում խոսելով մեծ հաղթանակի 30-ամյակի առջիվ, նշում էր նրա համաշխարհային նշանակությունը, շեշտելով.

«Սովետական ժողովուրդների այս մեծ հաղթանակի երեսնամյակի սեմին, Մենք, իբրև Հայոց Հայրապետ, միախարված ենք խորապես այն իրողությամբ, որ մեր փոքր ժողովուրդն է իր եղբայր ժողովուրդների կողքին, հավասար քաջությամբ կուլեց հայրենիքի թշնամիների դեմ, հավասար հերոսությամբ գոնիեր տվեց հայրենիքի փրկության ի խնդիր, որ արժանի դարձավ գալիք սերունդների երախտագիտության:

...Արևելքից արևմուտք, հյուսիսից հարավ, աշխարհը ամբողջ ցնծության մեջ էր: Բոլոր հորիզոններից շեփորվում էր հաղթանակ, հաղթանակ: Հաղթանակը արդարության ու ազատության ուժերի, հաղթանակը մարդկանց և ազգությունների հավասարության գաղափարի, հաղթանակը մեծ ու փոքր ազգությունների խաղաղ գոյակցության սկզբունքի: 1945 թվականի մայիսի 9-ին, աշխարհի պատմության ճակատին արձանագրվեց վկայությունը մեծագույն հաղթանակի, վկայությունը մեծագույն ուրախության: Արյունաքամ եղած սովետական ժողովուրդների համար ու նաև մեր փոքր ազգի համար, մայիսին հաղթանակը հանդիսացավ սկիզբը բոլոր ուրախությունների, սկիզբը նոր ու խաղաղ նվաճումների»:

Փա՛ռ մայիսյան հաղթանակը կերտող մեր բոլոր հերոսներին:

Թող անքակտելի մնա սովետական ժողովուրդների եղբայրությունը, և խաղաղությունը հաղթանակի ողջ աշխարհում»:

Հանդիսության ժամանակ խոսք է առնում նաև ՀՍՍՀ Մինիստրների սովետին առենթեր արխիվային վարչության պետ, Հայրենական պատերազմի մասնակից, պահեստի գնդապետ, պատմական գիտությունների դոկտոր Աշոտ Հարությունյանը:

Հանդիսությանը հորեկյանական օրինության հետևյալ գեղեցկահյուս խոսքն է ասում Հայոց Հայրապետը.

Վեհափառ Հայրապետի օրինության խոսքը

«Երանի սգաւորաց զի նոքա միախարեսցին»:

Այսօր, երբ հավաքված ենք այստեղ, ոգեկոչելու հիշատակը հայոց Եղեռնի վաթունամյակի և երեսուներորդ տարեդարձը Հայրենական մեծ պատերազմի հաղթական պարտի, ինչքան ճշմարիտ ու այժմեական է հնչում սուրբ վարդապետի անմոռանալի Լեռան քարոզը:

Վաթուն տարիներ անցան այն սև օրերից, երբ Արևմտյան Հայաստանում մի ամբողջ ազգաբնակչություն տեղահան արվեց իր նախնյաց մայր հոգից ու անխնա կոտորվեց մահվան ճանապարհների վրա:

Այդ ցեղասպանության զոհը հայ ժողովուրդն էր: Պատմությունը հայտնի է բոլորին, հայտնի է ամբողջ աշխարհին: Անհավոր այդ ողբերգությունից հետո թվում էր, թե վերջն է հայ ազգի: Թվում էր, թե կորած է ամեն հուզ՝ այս աշխարհում հայ ապրելու: Թվում էր, թե վերապրողներին մնում էր միայն սգալ ու ողբալ իրենց մեռելներին, և փակել գիրքը հայոց պատմության: Ո՞վ կարող էր հավատալ այն օրերին, թե սգավոր հայերը միախարություն պիտի գտնեն:

Եվ, սակայն, ո՞վ անհմանակի խորհուրդ մահվան ու կյանքի, որ տնօրինում ես ճակատագիրը ժողովուրդների: Գրեթե ճիշտ այն պահին, երբ հայու-

թյունը թվում էր գերեզմանված, հայոց երկնակամարի վրա նոր արև ծագեց: Վերածնվեց մեր ժողովուրդը իր խակ մոխիրներից: Նորից հավատաց իր սեփական ուժերին: Նորից սիրեց կյանքն ու երգը աշխատանքի: Նորից հուսաց իր ապագային: Նա բարձրացավ իր վիրավոր ոտքերի վրա ու հայացքը հառած դեպի լուսը արևի, իր կյանքի ճամփին բացեց նոր ուղի՝ խաղաղ ու ապահով, եղբայր ազգությունների հետ ձեռք-ձեռքի տված: Ու սկսեց քայլել դեպի առաջ, միշտ դեպի առաջ ու միշտ դեպի վեր: Սյասես է, որ ծնվեց ու աճեց, աճեց ու ծաղկեց հինավորը երկիրը Հայոց, մեր օրերի Սովետական Հայաստանը ամենայն հայոց:

Վաթուն տարիներ առաջ սգավոր մեր ժողովուրդը մխիթարված է այսօր: Մխիթարված, այո՞ւ, իր ազգային վերածնունդով, մխիթարված իր մայր հայրենիքի սքանչելի նվաճումներով, մխիթարված իր ապագայի լուսավոր հեռանկարներով:

Այսօր, մենք բոլորս խորապես մխիթարված ենք նաև այն պայծառ իրողությամբ, որ այս տարի, ապրիլի 24-ին, մեր ամբողջ ժողովուրդը, ի գլուխ ունենալով հայրենի պետության բարձր իշխանությունները, հանդիսավորությամբ ոգեկոչեց Մեծ եղենի նահատակների հիշատակը, ոխտելով Ել ավելի ժիր եռանդով, Ել ավելի ազնիվ ներշնչանքներով նվիրվել իր վերածնած մայր հայրենիքի վերելքին ու ծաղկմանը:

Ի տես հայ ժողովուրդի վերածնունդի, ի տես հայկական պետության վերականգնման, Պողոս առաքյալի խոսքերով կարող ենք բացականչել՝ «Մահր կու զնաց հաղթության» (Ա. Կորնթ. ԺԵ 55):

Միջեռնակարերդի բարձունքից դեպի արև խոյացող նահատակաց հուշարձանը, խորհրդանիշն է այդ հաղթության:

Իրեն Հայոց Հայրապետ Մեծ եղենի վաթունամյակի սեմին, Մեր պատգամն է ուղյալ ողջ հայության, որ ի Հայաստան և որ ի ափյուս աշխարհի՝ աղործ կարդալ մեր նահատակաց հոգիների համար, ոխտելով հավետ սուրբ պահել նրանց հիշատակը ու հավատարիմ մնալ նրանց նվիրական երազանքներին, որոնց իրականացման ճանապարհը իրենց արյամբ ներկեցին, փառավոր ժառանգություն թողնելով մեզ և հետագա սերունդներին:

Հայաստանի ժողովուրդը ձեռքը խեճին դրած հպարտությամբ կարող է այսօր ասել, ծանոթ բանաստեղծի խոսքերով՝

«Մեղեներին որպես խաչ,
Ես, երկիրն այս, նորից կերտեցի»:

Մայր Աթոռում Մենք ուղիղ գտանք, Եղենի վաթունամյակի հուշահանեսին, սոնախմբել նաև երեսուներորդ տարեդարձը հայրենական մեծ հաղթանակի: Կարծում ենք, թե ներքին աղերս կա այդ երկու պատմական եղելությանց միջև, հայ ժողովուրդի նակատագրի տեսակետից:

Աղերս այն իմաստով, նաև որ երկրորդ համաշխարհային պատերազմը գրեթե շարունակությունը եղավ կամ կրկնությունը առաջին աշխարհամարտի: Երկու պատերազմների սանձազերծողները նույն ուժերն էին, նույն նպատակներով: Աղերս նաև այն իմաստով, որ հայ ժողովուրդի ճակատագրի տեսակետից, երկրորդ աշխարհամարտը կարող էր հանդիսանալ կրկնությունը 1915—16 եղենին, այս անգամ բնաշնչումովը արևելահայ ազգաբնակչության:

Եթե Վոլգայի ափերին, ուշանար սովետական ուժերի հաղթանակը, տարակուս չկա, թե հայ ժողովուրդին սպասում էր երկրորդ մի եղեն:

Փաստաթղթերի հիման վրա վերջերս հրատարակված՝ «Պատրանք» վերնագրված գրքում, հեղինակը՝ Յուրկեն Թորգվալդ պատմում է, թե, եթ գերմանական բանակները առաջանում էին դեպի Կովկաս, զրավված հողամասերի ցեղասպան նախարարը՝ Ռոզենբերգ, քարտեզի առաջ իր ֆյուրերին տեղեկություններ էր տալիս Կովկասի ազգությունների մասին, Հիտլերը ջագրգիռ ու անհամբեր, ընդհատում է նրա խոսքը և գոռում՝ «Այդ վայրենի ժողովությունների հետ արեք ինչ որ ուզում եք: Ինձ հետաքրքրում է նավթը միայն: Բարքի նավթը գերմանական սեփականություն պիտի լինի»: Ահավասիկ, ինչ նակատագիր էր սպասում Կովկասի բոլոր ազգություններին անխտիր:

Կարծում ենք մեկնությունները ավելորդ են:

Ահա թե ինչո՞ւ, Հայրենական պատերազմի փառապանծ հաղթանակը, մեծագույն միմիթարությունը հանդիսացավ ոչ միայն ոուս ժողովրդի, այլ նաև Կովկասի եղբարացած ազգությունների և ի մասնավորի մեր ժողովրդի: Երանի թե կովկասյան ժողովությունները ուղիղ հասկանան միասնությունն ու անրաժանելիությունը իրենց նակատագրերի, սովետական եղբարության մեծ ընտանիքում:

Լուս և օրինությունն հայոց Ապրիլյան եղեռնի նահատակներին:

Լուս և օրինությունն Հայրենական մեծ պատերազմում զոհված հերոսներին:

Փա՞ռ և օրինությունն վերածնված Հայոց աշխարհին ու ժողովրդին:

«Երանի սգաւորաց զի նորա միմիթարեսցին»:

Տասը րոպէ ընդմիջումից հետո սկսվում է հանդիսադրյան գեղարվեստական քաժինը:

Սուաշինը ելույթ է ունենում Մայր տաճարի երգչախումբը՝ գեղարվեստական դեկավար՝ Ալոն Արքահամյան: Երգչախումբը կատարում է.

ա) Ալեքսանդր Հարությունյան՝ «Գթա», Տէր».

բ) Մակար Եկմալյան՝ «Լուց. ամպերը եկան, ծածկնեցին երկինք», մենակատար՝ Հենրիկ Ալավերդյան.

գ) Էդգար Հովհաննիայան՝ «Երեքունի-Երևան».

դ) Ալեքսանդր Հարությունյան՝ «Հայրենիքիս հետ», մենակատարներ՝ Լուին Զաքարյան և Հենրիկ Ալավերդյան.

ե) Արտաշես Մեսանյան. «Մեքվինմ», նվագախումբ:

Սույն ստեղծագործությունը նվիրված է Ապրիլյան եղեռնի նահատակների և Հայրենական պատերազմում զոհվածների հիշատակին: Հեղինակ և խմբավար՝ Արտաշես Մեսանյան:

Հանդիսադրյան ավարտին տ. Հովհակ եպս. Սանթուրյանը, հանուն Վեհափառ Հայրապետի, շնորհակալություն է հայտնում բոլոր ներկաներին և մասնավանդ հանդիսադրյանն իրենց մասնակցությունը բերած տ. Կոմիտաս և տ. Արտեն Արքազաններին, դոկտ. Աշոտ Հարությունյանին, Մայր տաճարի երգչախմբին, ճարտարապետ Արտաշես Մեսանյանին և նրա նվագախմբի անդամներին:

Ա. Հ.

